Բ. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ — ԹԻՒ 192

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Դրանուցման տոդր առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

R. P. Kalémkarian Methitharistangasse W. 4 Vienne (Autriche)

...ական եւ դրամ դրկել խմբագրութեան հասցէին

—

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

—

Գրութիւնք ետ չեն տրուիր

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

—

«Շարժում»ի երկրորդ տարեշրջանը աւարտելուն մէկ ամիս մնաց. մեր այն ամէն բաժանորդները որոնք մինչեւ հիմա չեն վճարած, թող բարեհաճին դրրկել իրենց բաժնեգիները։

Փետրուարի 1ին պիտի սկսի երրորդ տարեշրջանը. նախորդ տարուայ պարտքերը չը վճարողին «Շարժում» չը պիտի դրկուի։ Փետրուարին պիտի յայտարարուին նաեւ բոլոր ա՛յն բաժանորդներու եւ գործակալներու անունները, որոնք խիղճը ունին հայ թերթի մը վարձքը ուտելու։

ԴԱՐԸ ՎԵՐՋԱՆՈՒՄ Է

—

Մի քանի օր էլ և ահա 19րդ դարը կը գլորվի յաւիտենականութեան անդունդը իր հետ տանելով մարդկային բարդ կեանքի բիւրաւոր տխուր և ուրախ երեւոյթների յիշատակները։ Իր Հարիւրամեայ շրջանում մեծ գործեր կատարեց մեռնող դարը. աշխարհ և մարդկութիւն ահագին փոփոխութիւնների ենթարկվեցին, այնպէս որ եթէ մեզնից հարիւր տարի առաջ ապրող մարդը այսօր նորից աշխարհ գար, գուցէ ինքզինքը մի ուրիշ մոլորակի վրա կարծէ։

Մեռնող դարը մարդկային հանճարի զարգացումը հասցրեց շատ բարձր աստիճանի, գիտութեան հրաշքներով յեղաշրջեց մեր կեանքը, բայց այսօր մարդկութիւնը աւելի անորոշ, լարված և տենդոտ վիճակի մէջ է թողնում, քան իր նախորդ դարերը, որովհետեւ սա էլ չը կարողացաւ մարդկութեան բաղմակողմանի ձգտումներին բաւականութիւն տալ, և աւելի բորբոքեց գոյութեան կռիւը։

* * *

19րդ դարը մարդին զինեց խոշնդոտները կործանող, մարդկային կեանքը բարելաւող և դիւրացնող գիտութեան ղէնքերով, բայց այդ ղէնքը անցաւ միայն քիչերի ձեռքը. գրգռվեց միլիոնաւորների կիրքը, նախանձը ու բորբոքվեց հրահրվեց գոյութեան կռիւը, որովհետեւ մարդկութեանը յայտարարված սկզբունքը—«ամենմարդ հաւասարապէս իրաւունք ունի օգտվելու բնութեան և գիտութեան բարիքներից» չիրականացաւ. մեծամասնութիւնը տեսաւ և զգաց թէ ինքը չէ օգտվում ոչ միայն ամեն բարիքներից, այլ զուրկ է նոյնիսկ իր կեանքի «ամենաանհրաժեշտ պէտքերից»։

Ու այսօր, աշխարհի ամեն մի անկիւնում թագաւորում է գոյութեան կատաղի կռիւը. կռւում են հղօրները թոյլերին կլանելու համար, կռւում են թոյլերը իրանց գոյութիւնը պահպանելու, իրանց բաժինը ստանալու համար։ Եւ այս կռիւը կը շարունակվի մինչեւ այն ժամանակ, երբ իսկապէս ամեն ժողովուրդ և հասարակութիւն «հաւասարապէս կօգտվի բնութեան և գիտութեան բարիքներից»։

* * *

Ահա այսպէս, մեռնող—վերջացող դարը—լուսաւորեց մարդկային միտքը—մարդուն հասկացրեց որ ինքը կարող է աւելի երջանիկ, աւելի բարեկեցիկ լինել, ստեղծեց այդ դրութեանը հասնելու միջոցները—ղէնքերը՝ մարդկութեան ապագայի համար գծեց մի անհուն, անսահման հորիզոն—լարեց զսպանակը առաջ մղվելու դէպի անծայր նպատակակէտը, ու ինքը վերջանում է. հրաժեշտ է տալիս մեզ։

Ու՞մենք մնում ենք երազների ցնորքների մէջ, աւելի երիտասարդական ապագայ սպասելով եկող դարից—ճիշտ այնպէս ինչպէս հարիւր տարի առաջ մեր պապերն էին սպասում այս մեռնող դարից։ Եւ թող լինին այդ իտէալական ցնորքները, դարէ դար, շարունակաբար, որովհետեւ դրանք են մարդկային յառաջադիմութեան գլխաւոր աղդակները։

ՎԱՐԴՈ

——)·(——

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ամանորի առթիւ զուարթ տպաւորութիւններ չեն գրոս ճաշակել պիտի տամ Շարժումի ընթերցողներուն. տիսուր որակիչին չուրջը միայն կը բնամ դասաւորել զանոնք, զի անթիւ են եւ զայնս յառաջ բերող պարագաներն ու հեռզհեռէ աճեցուն եւ ցաւալի։

* * *

Սկսինք, պատրիարքարանի շրջանակէն։ Շարժումի 187րդ թուոյն մէջ Պոլսէն գրուած թղթակցութիւն մը կը թելադրէ զիս մերկ իրականութեանը մէջ պարզելու համար դէպք մը որ տակաւին արձագանք չէ գտած արտասահմանի մէջ եւ տարտամօրէն միայն յիշատակուած։ Վերոյիշեալ թղթակցութեան մէջ միայն. այն է հայոցմէ զօրք առնելու խնդիրը։

Ալաշկերտի շրջակայ գիւղօրէից մէջ վերջերս տեղի ունեցած կոտորածը առիթ տուած էր պատրիարքարանի մեղմ բողոքագիր մը մատուցանելու Դրան, որ բարձի թողի ենթարկելով սոյն թագրիրը յարմարագոյն առիթը համարած էր Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութիւնը կատարելու համար արտօնութիւն չնորհել, իբրեւ գիջողութիւն մը։

Օրմանեան Պատրիարք այն ինչ իր չնորհակալութիւնները փութացած էր մատուցանել այս մասին իր Վեհափառի մօտ, եւ ահա Թահսին պէյի միջոցաւ պահանջուած էր իրմէ որ Խառն Ժողովը ուղերձ մը ներկայացունէ կառավարութեան որուն մէջ գրուած ըլլայ թէ հայերը՝ աւելի շոշափելի կերպիւ արտայայտելու համար իրենց հպատակութեան եւ հաւատարմութեան զգացումները, պատրաստ են զինուոր տալ Օսմ. կառավարութեան։ Սոյն առաջարկն էր որ երկար ժողովներու տեղի տուած էր Յարութիւն փաշայի բնակարանին մէջ, որ պաշտօն ստանձնած էր կառավարութենէն ընդփոյթ ներկայացընելու սոյն «բռնի խնդրանքը՝ վարչական կրկին ժողովոյ միաձայն քուէին»։ Կրօնական Ժողովոյ երկու ատենապետ սրբազանները մաքառած են սոյն առաջարկին դէմ. մատնանիշ ընելով մանաւանդ սա պարագան թէ իրենց պաշտօնավարութեան օրինաւոր շրջանն աւարտած է վաղուց է վեր։

Իրենց յառաջ բերած առարկութիւններն ընդունելով Կրօնական Ժողովոյ միւս եկեղեցական անդամներէն, Դրան պահանջողութիւնը անգործադրելի մնացած է եւ Օրմանեան, Տատեան ու Նորատունկեան շատ ամօթով մնացած են կառավարութեան առջեւ։ Կը հաւատան իսկ թէ այս պարտութեան հետեւանքէ է որ սոյն վերջինը հրաժարական մատուցած է Քաղաքական Ժողովոյ անդամակցութենէն։

Ընթերցողք կը յիշեն անշուշտ որ հոգելոյս Ներսէս Պատրիարքի ժամանակ եւս յուզուած էր սոյն խնդիրը. բայց ազգասէր Պատրիարքը կարգ մը պայմաններ ներկայացուցած էր Դրան, որոց գլխաւորագոյնը հայկական բանակին օսմանեան բանակէն անջատ լինելուն մէջ կը կայանար. Ներսէս կը խորհէր—եւ շատ իրաւամբ—թէ իսլամները կը պատերազմին լոկ մոլեռանդութենէ մղուած եւ առհասարակ բոլոր Քրիստոնեայ ազգերը իրենց թշնամի կը նկատեն, ուստի եւ երբ Թուրքը Քրիստոնեայ պետութեան մը դէմ պատերազմական վիճակի մէջ գտնուէր, ինչ երաշխիք կար որ Մահմետական զինուորը իր հրացանը չի պիտի ուղղէր նոյն երկրին ծառայութեանը կոչուած քրիստոնեայ զինակից հայ զինուորին դէմ։ Եւ որքան որ մեր յիշողութիւնը կը ներէ, կը կարծենք գիտնալ թէ Ներսէս Պատրիարք Ազգային Ընդհանուր Ժողովոյ օրակարգին անցուցած էր սոյն կարեւոր հարցը, որուն լուծումը իր ձեռնհասութենէն վեր դասած էր ժամանակի վարչութիւնը։

Բայց ո՛վ որ Ազգային Ժողով բառը բերանը կառնէ հիմա տիսուր խայինի կը նկատուի, կը բացագանչէ Տատեան՝ մեր ներկայ միլլեթ խայինին։

* * *

Տարի մը առաջ «Մէթոտ»ի հեղինակին՝ Կոստանդեանին դէմ եղած արդար խծբծանքները յոյսեր կը ներշնչէին մեզ հայերուս թէ մեր լուրջ դասակարգը աւելի սատարող պիտի ըլլար այսուհետեւ ազգային զարգացման գործին եւ ահա յուսախաբութիւն մը եւս կը կրենք Revue Picardeի մէջ կարդալով հատուած մը որ կը հաղորդէ թէ իշխան Դուլիտոն Լուսինեան Ամիէն քաղաքին նուիրած է գեղարուեստական թանկագին նկարներ եւ արժէքաւոր հատորներ։ Կոստանդեան յոյներուն թողուց իր ճոխ մատենադարանը։ Ղալաթիոյ մեր ազգային մատենադարանի կազմակերպութիւնը—եթէ երբէք գոյութիւն ունեցած է այն—կրնար եւ կրնայ նոյնիսկ այժմ ո՛եւէ վստահութիւն չը ներշնչել, քանի որ մուկերու սնունդ մատակարարելու կոչուած են կուտակուած գիրքերը, չնորհիւ հոգածութեանց՝ իրերայաջորդ վարչութիւններու։ Ուստի եւ այս տեսակէտով արդարացնողներ

գտնուեցան Կոստանդեանի արարքը։ Իշխան Լուսինեան որ միշտ հետաւորած է մեր ազգային շարժումէ երուն, քաջալերած է ամէն բարի ձեռնարկ եւ խրախուսած մեր ծաղիկ երիտասարդութիւնը, չէ՞ր կրնար մինչ իր նուէրը վստահիլ արդիւնաւոր ձեռքերու եւ առիթը ընծայելու մեզի օրինակ ցոյց տալու զինքը՝ մեր օտարասէր ուներորդ դասակարգին։ Բայց ո՞ւր են այդ արդիւնաւոր ձեռքերը պիտի ըսուի, որոց խնամքին կարելի ըլլայ վստահիլ այդ կարգի նուիրատուութիւններ։ Իրրեւ ամենավստահելի մարմին՝ չի պիտի վարանիմ երբէք ցոյց տալու երկու տարի առաջ Աղեքսանդրիոյ մէջ հիմնուած ազգային մատենադարանը՝ որուն խնամակալները ձեռնհասութեան, ուղղամտութեան եւ այխատասիրութեան օրինակելի տիպարներ կրնան նկատուիլ։

Իրաւ է թէ այդ հաստատութիւնը տակաւին չը ներկայացուց հանրութեան տեղեկագիր մը իմասին իր գործառնութեանց, սակայն առիթ է ներ յիշեցնեմ թէ Եգիպտոսի մէջ ուրիշ մատենադարան մը որ կոչուած է ըլլալ չտեմարան մը ամէն լեզուով հրատարակուած գրքերու, հանդէսներու եւ թերթերու, որք իմասնաւորի հայոց ազգին եւ երկրին վերաբերեալ նիւթերու վրայ կը խօսին։

Եգիպտոսի պէս միջազգային երկրի մը մէջ ուր հիշատ է ձեռք բերել ամէն գիրքերու թիւն եւ բառնալ ամէն խոչընդոտ այնօրինակ ձեռնարկի մը յաջողութեան համար, աւելորդ յոգնութիւն մը չէ մեզի Իշխան Լուսինեանի եւ հետեւողներուն ուշադրութեան ներկայացնել նկրտելու այդ մատենադարանը։

* * *

Աւելորդ յոգնութիւն մը չի պիտի ըլլայ սակայն ծանրանալ այն նորամուտ չարժումին վրայ, որ հսկայաքայլ կը ծաւալի, կը ճարակի արտասահմանի մերազնեայ գաղթականութեանց մէջ։ Բաղդախնդիրներ չեն սակայն ամէն անոնք որ ամուսնական կապեր կը հաստատեն օտարուհիներու հետ։ Այս օտարամոլութեան մրցանակը ապահովապէս կը խլէ Բարիզի հայ երիտասարդութիւնը։ Հարցը թէ Պոլսէն հեռացած, դասակարգ մը հայեր՝ լուրջ զբաղումի երու հետամտելէ առաջ, նախապատիւ համարեցին տարուէի մը զգիտել, ու սիրային ափանքներու մէջ ուսումնասիրութիւններ կատարել, որոնց զոհ գացին ուշ կամ կանուխ։ Սրան տէր, զգացող երիտասարդութիւնը ինչպէ՞ս անմիջական կերպիւ կը տկարանայ անուշ, մեղուշեղ նայուածքի մը ազդեցութեան տակ՝ արմատական մոռացման ենթարկելու չափ իր զգացումները՝ հանդէպ հայուհիներու, որոնք սակայն, զօրեղ քաջասրտութեամբ մը, իրենց սիրտը կոյս կը պահեն՝ օտարներու համար, միշտ յուսալիր թէ համարիւն ազգակից մը պիտի սիրէ նախապատութիւնը իրենց տալ։ Զէ՞ մի որ ազգ մը կը կազմուի ընտանիքներէ եւ ընտանիքներն անհատներէ։ այժմ որ աւելի քան երբէք պէտք է զօրացած ըլլան մեր ընտանեկան կապերն, այս նորածին հակումը տկարութիւն համարենք թէ չահախնդրութիւն, — պախարակելի երկու տեսակէտով ալ։

Չի պիտի ուզէի ծանրանալ այս կէտին վրայ, եթէ մեր թերթերն ալ կերպով մը չի քաջալերէին չարունակ այս չարժումը։ Ամենէ թարմ տպաւորութիւնս կը պարտիմ տեղւոյս մէջ հրատարակուած «Արշալոյս» թերթին, որուն 36րդ թիւը «պովեստով կը ներբողէ» Զուիցերիոյ մէջ հայ երիտասարդի մը ամուսնութիւնը Հելվետացիի մը հետ։

* * *

Գովեստներ չէ՞ որ կը ներբողէ հայ նկարագրին չուրջ Larousseի մեծ բառգիրքը զոր՝ սոիթը ունեցայ թղթատելու եւ ծայրէ ի ծայր կարդալու հայոց վերաբերմամբ յիշատակուած տասնեակ մեծագիր սիւնակները։

«Հայերը, կրսէ մատենագիրը, սովորաբար գեղադէմ են, սեւ աչուի եւ սեւամազ, կրակոտ նայուածքով, թխադէմ եւ արծիւաքիթ, խնայող, հիւրասէր, բարեացակամ, ուղղամիտ եւ մեծապէ՞ ընդունակ առեւտրական գործերու մէջ, միշտ աշխատող եւ ուշադիր, բայց չահասիրութիւնը ազահ դրած է զիրենք եւ փիչ չատ նմանողութիւն ունին հրեայներու հետ, զոյս սակայն կատեն։ Հայերը դանդաղ են, լսակեցիկ, միշտ մտածկոտ, ոչով չափ փարած իրենց նախահարց սովորութեանց, իրենց սէրը՝ կեդրոնացուցած ընտանիքի եւ զաւակի հոգածութեան մէջ։ Եւ սակայն «անվեհերութիւն ու քաջասրտութիւն կը պակսի անոնց, կը սեղադրուին որկրամոլութեամբ, արծաթասիրութեամբ եւ գինեմոլութեամբ»։

Ինչ կուզէիք որ գրուէր օտար հաւաքածոյի մը մէջ երբ նոյնիսկ մեր հրապարակագիրները—գէթ մեծ մասամբ—ժամանակէ մը ի վեր օտար թերթերու մէջ հայերը կը ներկայացնեն իրրեւ ոչխարի նման հլու ժողովուրդ մը՝ որ մորթուելու, կոտորուելու արժանի էր։

Իսկ՞ թէ սոյն գործին երկրորդ տպագրութեանը մէջ, որ անշուշտ պիտի ունենայ, կարելի ըլլայ մեղի բարեփոխել տալ այդ տխուր դատատանը։ բայց ո՞վ պիտի զբաղի։

ԽՃԻԿ

Աղեքսանդրիա, 19 դեկտ.

ՅԱՅՏԱՐՈՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»ի

—

Ցաւօք սրտի կը ծանուցանենք թէ, այն չէնքը, ուր Հայրենիք կը հրատարակուէր, անցեալ դիշեր հրոյ ճարակ եղաւ։

Վարչութիւնս կարելի եղածին չափ շուտով պիտի հրատարակէ թերթը։

Մեր բաժանորդները կրնան ապահով ըլլալ, դի Հայրենիք ապահովագրուած էր։

Վարչութիւն Հայրենիքի

18 Դեկտ. 1899

Մեր առժամեայ հասցէն է՝

The Hayrenik

458 8rd Ave., New York City

——)·(——

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՒՐԻԶ, 25 Նոյեմ.

Թղթակցի համար չատ զգէլի մի գործ է միշտ գրիչ վերցնել գրգռվելու համար կեղտոտ գործեր եւ ախուր երեւոյթներ մատնանիշ անելու համար։ Գէթ ինձ է վիճակվել այս զզէլի պարտականութիւնը, չատ փիչ է պատահում որ գրիչ վերցնեմ մի ուրախալի երեւոյթ նկարագրելու համար, սակայն ես ինչ միգաւոր եմ, երբ չեն ներկայանում միսիոնարական եւ ուրախարեր գործեր ու գործեր։

Այս անգամ ես ստիպված եմ յարգելի ընթերցողներին ներկայացնելու մեր ամենատխուր երեւոյթներից մէկը, «Թաւրիզի Հայ. Բարեգործական ընկերութեան» վարչութեան հանրաշնաս եւ զզանք ազդող արարքները։

Վերջերս «Մշակ»ում տպված էր Կ. Ֆ. սուրագրութեան տակ մի յօդուած, որ հանգուցեալ Տիկին Մարիամ Մելիք—Սարգսեանցի նկատմամբ մի քանի կենսագրական տողեր նուիրելուց յետոյ, ակնարկել էր նոյն ընկերութեան վարչութեան «ապօրինաւոր գործերի եւ զեղծումների» պատճառով հանգուցեալ տիկնոջ նոյն վարչութեան անդամակցութիւնից հրաժարվելը։

Այս իրաւացի եւ ճիշդ ակնարկութիւնից նոյն ընկերութեան վարչութեան նախագահուհին դրդիռվելով եւ կրքոտելով ժամանակ է հրաւիրում երկու թղթի հոգաբարձուներին եւ նրանցից խնդրում է հերքել այդ գրածը։։։։

Հրատարված հոգաբարձուների մէջ գտնվել են ազնիւ եւ խելքը գլխին մարդիկ, որոնք պառակել են ընկերութեան վարչութեան այս անտեղի առաջարկութեան դէմ, իրաւացի կերպով յայտարարելով, թէ այդ գործը պատկանում է վարչութեան եւ հետեւաբար վարչութիւնը ինքը պարտաւոր է հերքել եւ ոչ թէ հոգաբարձութիւնը։

Վարչութեան այս ազնիւ վարմունքից պարզ երեւում է, թէ ուզում էր ծածկել իր զեղծումները եւ ապաւ-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԷՍ

—

(Շար. 90րդ թիւեն եւ վերջ)

Ես գիտէի առաջ թէ նախ հայութեան մէջ յայտնի գրգռման որոշ նշանը նոյն խմբագրատունէն եղած էր։ Եւ եթէ Հնչակեան կուսակցութիւնը գոյութիւն չառնար, նոյն երեւոյթներուն հանդիսատես պիտի լինէինք իսկայ հաւանական կերպով, որովհետեւ դեռ 1886—87 թուականներուն, երբ իմ մէջ յեղափոխութեան գաղափարի նշոյլը անգամ չէր կրնար մուտք գտնել, կառավարութեան մի քանի բացորոշ խստութիւններու եւ խուզարկութիւններու պատճառը առհասարակ կը վերագրէին Փորթուգալեան անուն մէկին։ Տաճկատանի ամենահուլ անկիւնները այդ «Փորթուգալեան» եւ «Սրմենիա» անունները հասած էր վերոյիշեալ թուականին, ժողովուրդը որոշ չէր գիտեր թէ ո՞վ էր Փորթուգալեան եւ կամ ի՞նչ էր «Սրմենիա»ի հրատարակուելուն նպատակը, բայց ըմբռնած էր, թէ մի ըմբոստ տաճկատանցի հայ ապաստանած էր Մարսէյլ եւ կառավարութեան հակառակ ուղղութեամբ թերթ մը սկսած էր հրատարակել «Սրմենիա» անունով։։։։

բինաւոր գործերը հոգաբարձուների ստորագրութեանց տակ թաղնվելով։ Եւ արդէն ինչպէս քիչ յետոյ տեսնելու ենք. նոյն այս նպատակով վարչութիւնը իր տեարակները «մի ժամուայ մէջ» քննել է տալիս նոյն հոգաբարձուներին եւ հաչիւների «ճշգրտութեան եւ օրինաւորութեան» մասին նրանց ստորագրութիւնն է ստանում եւ յետոյ ապում իրա այս տարուայ տեղեկագրի մէջ, որպէսզի հեռաւոր ազգայիններն աչքին թոզ փչէ եւ իրա գեղծումները թաղցնէ։

Երբ իրոք մի այդպիսի հերքում երեւան գայ, անշուշտ «Մշակ»ի թղթակից Կ. Փ. պիտի ցոյց տայ իրա փաստերն ու ապացոյցները. սակայն մենք առանց սպասելու այդ հերքումին եւ նրա դէմ թղթակցի կողմից արվելիք պատասխանին, այժմից կը թվենք այն, ապօրինաւոր գործերը եւ գեղծումները, որ տեղի են ունեցել այս վերջին մի տարուայ ընթացքում նոյն ընկերութեան վարչութեան կողմից։

ՄԻՐՋԱ.

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ.

—

Ինչ կուզէ՞ք Պ. Մինաք Զաթոյեան կը հարցնեմ ձեզ. կուզէք որ թողնենք անբարոյականութեան մէջ թաղուած մեր եղբայրները չարունակեն իրենց վատ կեանքը։ Պարզ է թէ իմ խօսքս մեղաւորներու համար է։ Չը յորդորե՞նք զիրենք, չը ջանա՞նք նոր կեցնել իրենց բռնած անվայել ընթացքէն։ Չը նկատե՞նք պակասութիւնները եւ Զաւարիայի լութիւն պահպանե՞նք։ Եթէ լռենք, հինգ հոգին զաղը տասը կըլայ, որովհետեւ չարը վարակիչ է։

Այո, ես իրը հայ անհատ, անոնց մոլութիւնները նկարագրեցի, անոնց վրայ բարոյապէս ազդելու համար։

ՍՐՄԱՒԻՐ

Եաշ, 12 դեկտ.

——).(——

ՆԱՄԱԿ ՄԵԾ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

—

(ՕՐՕՐԻՆ ՎԷՃ)

Ապրիլ-Հարիւր ապրար! դու բարեհաճեցար հրամայել, մեզի դատի ենթարկել, քու Փարիզ վիլայէթի ուղղիչ դատարանի առաջ։

Շնորհապարտ ենք, որ մեզ դիւրութիւն պիտի տաս առելի լայնարձակ մերկացնելու այն ամէն սպանութիւնները ու արիւնլեղութիւնները, որոնց համար արժանացած ես Կարմիր Գաղան անունին. չես կրնար մեզ լռեցնել քու այժմեան եղեռնագործութիւններու հանդէպ։

Դու դեսպաններովդ լուրեր կը տարածես թէ՝ քու վեսադ Մահմուտ փաշան խենթ է, թէ փախուցած է իր կնկան անչափահաս երախայները, թէ խարդախութիւն ըրեր է անգլիական ընկերութեան ՀԱՍԵԼու գիտումով անոր քովը վրադ անսահման ազդեցութիւն ունենալը պարծենալով։

Բոլորն ալ սուտ է, աղբար! Մահմուտ փաշան խենթ չէ, այլ ազատամիտ մարդ մը. իր փախուցած անչափահասներն երկուքն ալ ամուսնացած ու զաւկի տէր են. իսկ գալով անոր որ պարծենցած է քու վրադ ազդեցութիւն ունենալը, անկարելի է։ Դու լաւ գիտես, տարի մը կայ որ Մահմուտ փաշան՝ քու փեսանէրէդ մէկ հատիկը՝ սէլամլըքի շաբաթական արարողութեան ներկայանալէ ինքզինքը հեռու պահեց և անոր այս կարի համարձակ բացակայութիւնը բացորոշ կը նշանակէր—թէ նա քեզ կատէ։

Ուրիշ բան մը. միայն Մահմուտ փաշան չէ որ ձեռքերէդ իր անձը ճողոպրեց. Փարիզ հասաւ սկսեցի պախարակել Փորթուգալեանին բարբաջանքները, որոնք ոչ միայն օգտակար չէին կրնար ըլլալ այլ առելի չփոթ առելի փոշի կը բարձրացնէին։ Ես ծանօթանալով այդ համբաւաւոր խմբագրին մտքին ու բարոյականին հետ համոզուեցայ որ անոր քննադատութիւնները ոչ միայն ներքին համոզումի արտադրութիւններ էին, այլ նաեւ կեղծ հակակրութեան արդասիք։

Այժմ ալ քանի մը խորհրդածութիւն կուզեմ ընել «Արմենիա»ի արշաւանքի մասին։

Դուք Պ. Փորթուգալեան եւ վի ժուկներու խմբագ. դուք Հնչակեան կամ Դրօշակեաններու ձեռնարկները վնասակար կը հուչակէք առարկելով, թէ այդ ձեռնարկները վնասաբեր են որովհետեւ կոտորած կառաջացնեն, որովհետեւ թուրքը կը գրգռեն։ Մենք կը հարցնենք թէ ամենասոսկալի բռնութեանց եթէ կարելի է հանդուրժել. ամենատանհանդուրժելի անիրաւութեանց եթէ կարելի է լուռ ու մունջ տոկալ, ինչո՞ւ արդեօք ձեր պաշտած Աւետիսեանը չի տոկայ չի հանդուրժեց եւ հրացան առաւ ու Վան կռուի փութայ այն տեղի «ժողովրդին կոտորուելուն պատճառ դառնալով։ Դեռ «Հնչակ»էն առաջ Ցաճկատանի մէջ հայ ժողովուրդը գրգռելով ստիպեցիք որ կառավարութիւնը խուզարկութիւններու խստութիւններու ձեռնարկէ խաղաղ հայ ժողովուրդին հանդէպ. ինչպէ՞ս կը լինի որ Սրմենական Ագրիպասեան դեռ 89ին ասպատակային խումբ կը կազմէ, լեռը կելլէ ու կռուի կսկսի թուրք կառավարութեան դէմ, եւ ոչ միայն Վանը կը յուզէ այլ նաեւ ամէն ուրէք որ այդ լուրը կը հասնի։

Ահա երեւոյթներ, դէպքեր թէեւ փոքրիկ՝ բայց խիստ յատկանշական մեր յեղափոխական շրջանի, ժողովուրդի կեանքի ու գործիչներու նկատմամբ։ Թողէք Պ. Փորթուգալեան, թողէք ձեր գրիչը. բաւական է օրքան թուղթ մրոտելով ձեր սիրտը մրոտեցիք սեւցուցիք եւ ծաղրելի դարձաք. ալ բաւական է ինչ որ ձեր ֆրազներով ոչխարամիտներ մոլորեցիք, ասուտերով խաբեցիք ձեր պառաւ դանկի արտադրութիւնները քչելու համար իրը թէ դուք միակն էք որ Երիմեան հայրիկին սիրելի էք դարձած, որ Մինաս Չերազը ձեզ եւ ձեր գաղափարներուն համամիտ է... եւայլն եւայլն. ատենցմով՝ որքան ալ քու արիւնոտուշտ ճիտպոթիւններուդ խղճամիտ պատմագիրը ըլլալուս։

Դրեց՝ ԲԻԷՌ ԿԻՒԼԱՐՏ
Թարգ. Թ.

Սոֆիա, 25 Դեկտ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պօլսէն մեզ «Հայկական յեղափոխական Միութեան» Կ. Պոլսոյ քոմիթէի կողմէն կնքուած կոչ մը ղրկուած է հրատարակելու համար։ Այդ կոչով հրաւէր կը կարդացուի հանդանակութեան սկսիլ հայ յեղափոխական բանտարկեալներու համար, որոնք անօթութեանէ կը տանջուին և կը մեռնին տաճկական բանտերու մէջ։ Հանդանակութեան գրամը պէտք է ղրկուի «գեր քարտիզաբնակ վաճառական Պ. Իսկէնտէրին։

Այդ կոչով մեզմէ ալ կը խնդրուի «Շարժումի մէջ»ցաւ գրամ հաւաքել։ Նպատակը գէշ չէ, բայց մենք ոչ Պ. Իսկէնտէրը կը ճանչնանք և ոչ ալ տեղեկութիւն ունինք թէ Պոլիս այդպիսի մի քոմիթէ գոյութիւն ունի։ Այս լուրը հաստատելով հանդերձ կը խնդրենք Պ. Իսկէնտէրէն մեզ տեղեկութիւն տալու. նոյնպէս Բարիզի մեր բարեկամներէն սատուգելու և մեզ հաստատելու նեղութիւնը յանձն առնելու քարեհաճին։

— Վենետիկի Մխիթարեաններէն Մեսրոպ վարդապետ Ճերմակեան որ քսան տարի առաջ հայ լուսաւորչական դարձած էր, հիմա ալ հայ հռոմէական պատրիարքարանի դիմելով կրկին հայ հռոմէական վարդապետ դարձած է։ Արդեօք ի՞նչը դրդած էր այդ դաւանափոխ վարձիդ իսկ լինին, ձեր ծերացած տկարութիւնը կը յայտնէք, կը խոստովանիք։ Ալ բաւական է, աչ լրացած է ձեր դանկի պաշարը, անցած ձեր ժամանակը. զուր մի վրդովէք յեղափոխականը։ Զեզ եւ ձեր ամբողջ վիժուկներու խմբակին կը յանձնարարենք երթալ քիչ մը ալ ձեր մեղքերու քաւութեան վրայ մտածել։ Դուք այն օրէն որ, ոգեւորութիւնը գործին տեղի տուաւ, այն օրէն կրսենք, դուք հայութեան համար անպէտք եւ նոյնիսկ բեռ մը դարձաք...

Վերջացնելով իմ խօսքս այս մասին ուրիշ անգամ ես կը դառնամ, եթէ տիրը ներէ ինձ այն բնական քայլերու մասին խօսելու, որ մեր մէջ Դաշնակցութիւնը մացուցած իրը ոչ կուսակցական այլ պարզ ազատ յեղափոխականներ մեր պարտականութիւնները կատարելու համար դէպի մեր ազգային վերածնութեան գործը։

Լ.Ա.

18 Նոյեմբեր

——)(——

խրստականը խնդրոյն ծանրութիւնը ըմբռնելով կազդարարէ որ եւ դառնան առանց ուրէք փորձ փորձելու զինքը ձերբակալելու համար, որովհետեւ ինքը կը մեռնի բայց անձնասպանը չը լինիր. այնուեւ ասոր յաջորդող կրկնակի ազդարարութիւնք անօգուտ կանցնին. փախստականը գաւօք կը յայտնէ որ ստիպուած պիտի լինի զենքի դիմելու որմէ անտարակոյս առաջին վնասուողը ինքը (վաճառականը) պիտի լինի, քանի որ ինքը զինուորներէն քանի մը քայլ առաջ անցած է։ Զերկարենք, փախստականին հրացանը կը պայթի, վերջապէս այդ գեռահաս ծաղիկ երիտասարդը կը գլորի իր ձիէն վարհոն տեղն ու տեղը կը մեռնի։ Զինուորները հաւատարիմ իրենց նշանարանին, կը դիմեն իրենց միակ քաջութեան՝ փախուստի. նոյնիսկ դիակն ալ հոն ձգելով։ Իսկ փախստականը այս անգամ «եղբայրասպան» կը չարունակէ իր ճանապարհը ազատ համարձակ։ Այդ մահուան լուրը հասնելուն պէս վաճառականի բոլոր ծանօթները տխրութեան մէջ կը համակուին, առանց մեղադրելու սակայն մարդասպանը...

Այս պատմութիւնները ընդէ վերջ

դառնալով։ Դեռ «Հնչակ»էն առաջ Ցաճկատանի մէջ հայ ժողովուրդը գրգռելով ստիպեցիք որ կառավարութիւնը խուզարկութիւններու խստութիւններու ձեռնարկէ խաղաղ հայ ժողովուրդին հանդէպ. ինչպէ՞ս կը լինի որ Սրմենական Ագրիպասեան դեռ 89ին ասպատակային խումբ կը կազմէ, լեռը կելլէ ու կռուի կսկսի թուրք կառավարութեան դէմ, եւ ոչ միայն Վանը կը յուզէ այլ նաեւ ամէն ուրէք որ այդ լուրը կը հասնի։

Ահա երեւոյթներ, դէպքեր թէեւ փոքրիկ՝ բայց խիստ յատկանշական մեր յեղափոխական շրջանի, ժողովուրդի կեանքի ու գործիչներու նկատմամբ։ Թողէք Պ. Փորթուգալեան, թողէք ձեր գրիչը. բաւական է օրքան թուղթ մրոտելով ձեր սիրտը մրոտեցիք սեւցուցիք եւ ծաղրելի դարձաք. ալ բաւական է ինչ որ ձեր ֆրազներով ոչխարամիտներ մոլորեցիք, ասուտերով խաբեցիք ձեր պառաւ դանկի արտադրութիւնները քչելու համար իրը թէ դուք միակն էք որ Երիմեան հայրիկին սիրելի էք դարձած, որ Մինաս Չերազը ձեզ եւ ձեր գաղափարներուն համամիտ է... եւայլն եւայլն. ատենցմով՝ որքան ալ

դապետին քսան տարի առաջ լուսաւորչական դառնալ, իսկ այդքան երկար ժամանակէ մը յետոյ՝ կրկին դարձի գալ։ Ինչպէս կերեւայ դաւանանք փոխելը շապիկ մը փոխելու չափ դիւրին է։ Բողոքական պատուելի մը վարդապետ կը դառնայ, կաթոլիկ և լուսաւորչական վարդապետներն ալ փոխն ի փոխ կը գործածեն դաւանութիւնները։

— Եգիպտոսի դաւառական ժողովը դումարուեր՝ և առաջնորդ ընտրեր է՝ Եղիշէ եպիսկոպոս Դուրեանը։ Բայց կը կասկածուի թէ Արմաշի փոխ վանահայրը համաձայնի Եգիպտոս երթալ։

— Մուշէն, Խիզանէն և շրջակայ գիւղերէն 200ի չափ աղքատ հայ ընտանիքներ՝ ձմրան այս ցուրտ եղանակին՝ դաղթած են Տիգրանակերտ և եկեղեցիի շրջաբակը լեցուած։

— Կովկասի դերասաններու մէջ հիմա աչքի կը զարնէ, Յովհաննէսեան անունով երիտասարդ մը, շրջանաւարտ Մոսկուայի դերասանական դպրոցէն։ Երիտասարդ դերասանը հիմա կը գտնուի Պաքուի հայոց թատրոնի դերասանական խմբին մէջ և կը կատարէ եւրոպական թատերգութեանց մէջ գտնուած ամենէն դժուար դերերը։ Քննադատները կը յուսան որ Պ. Յովհաննէսեան ապագային աչքի զարնող դերասան մը պիտի ըլլայ։

— Բարիզի մէջ կազմուած «Հայոց ժողովրդական երգերի» տեսչութիւնը, յառաջիկայ յունուարին պիտի սկսի հրատարակել հայ երգերու հաւաքածոն, ամէն երկու ամիսը մէկ գիրք։ Եւրոպական բոլոր լեզուներով և նօթաներով։

ՊԱՏՄԱՆԲ. — Փարիզի համար 6 գիրքը 24 ֆրանք, 3 գիրքը 12 ֆրանք։ Դաւառներու և Ալժէրիի համար 6 գիրքը 27 ֆր. 3 գիրքը 14 ֆրանք։ Օտար երկրի համար 6 գիրքը 32 ֆր. 3 գիրքը 17 ֆրանք։ Ամէն 2 ամիսը 1 գիրք գինը 6 ֆրանք, 6 գրքերի բաժանողը կարող է վճարել մասմաս։ Ա. գիրքն ստանալիս 12 ֆր. Բ. գիրքն ստանալիս 10 ֆրանք. Գ. գիրքն ստանալիս 10 ֆրանք։

Մեզմէ խնդրուած է այդ հաւաքածոյի գործակալութիւնը յանձն առնել և անդորրագրեր ղրկուած է։

Վառնայի մէջ նուագով զբաղող երկսեռ հայերուն կառաջարկենք ստանալ այս հաւաքածոն, որով պիտի ծանօթանան մեր ժողովրդական երգերու հետ, ու հասկնան մեր ժողովրդին հոգին։ Ամէն նուագ սիրող և անով զբաղուող հայուն պարտականութիւնն է այս հաւաքածոն ստանալ։

——).(——

ՆԱՄԱԿԱՑՈՒՓ

—

Բարիզ, Պ. Եղեազարեան.— Ստացանք ձեր ղրկած անդորրագրերի պրակը։ 10 0/0 ոչոսը չենք ընդունիր. եթէ ծախք ունենանք, միայն ծախքը կը հաշուենք։ Մասնաւոր նամակ քանի մը օրէն կը գրենք։

— Սիլիսարէ, Պ. Ա. Ե. —Ստացանք ձեր ղրկած քսան ֆրանքը՝ յուսով ենք որ մնացածն ալ շուտով կը ղրկէք։

— Ցիւրիխ, Կարիճ — Համալսարանի հասցէն է.

3 Place Monge 3 Paris
N. Bagdassarian

— Ֆիլիպէ, Վ. Ման. — Ստացանք, կը տպագրուի։

—Բարիզի՝ բաժանորդներուն— Կը խնդրենք բարեհաճեցէք բաժանեգինները յանձնել «Բանասէրի» տնօրէն Պ. Բասմաճեանին։

— Ստացած ենք «Բանասէրի» երկրորդ համարը, այս անգամ տպագրուած։

— Մոսկուայէն ստացանք բժիշկ Միմէօն Շահնազարեանի երեք գրքոյկները, «Մի քանի խրատներ դպրանոցի աշակերտներին», «Ճառ դպրանոցին ներկայանալիս», և «Երեւանայ հայոց թեմական դպրանոցը և հասարակութիւնը»։

— Ստացանք Վառնայի մէջ տպագրուած հանգուցեալ Տիգրան Մանավեանի «Պատուհանի մուրհակը» թատերգութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թրանսվալի Եւրոպայի ներկայացուցիչը, Պրիւքսէլի թերթերէն մէկուն խմբագրին հաղցին թէ՝ եթէ Անգլիա պաշարէ Լօրէնցօ-Մարքէզը Թրանսվալը սովամահ պիտի ըլլայ, պատասխանած է.

Վերջապէս մենք Եւրոպայէն կը ստանանք միայն արդուզարդի իրերը, առանց որու շատ լաւ կրնան ապրիլ անոնք, որոնք վճռած են այսպէս թէ այնպէս իրենց անկախութիւնը պաշտպանել։ Մեր երկիրը գոհացուցիչ չափով կարտադրէ միս, ցորէն և եգիպտացորէն։ Մեր մեծաքանակ հօտերը մեզ կը ժամակարարեն բուրդ և կաշի մեզի հագցնելու և տաքցնելու չափով։ Ճիշդ է մենք ստիպուած պիտի ըլլանք առանց անգլիական ասուի ապրիլ, սակայն այն ժողովուրդը որ որոշած է կամ յաղթել կամ մեռնիլ, չի մտածեր նուրբ կերպասէ զգեստներով պատերազմի դաշտը երթալ։ Մենք կը բաւականանք մեր երկրի մէջ պատրաստուած կոշտ ու կոպիտ կերպասներով։ Մենք չենք ունենար սիգար, բայց կը բաւականանք մեր աղգային ծխամուրճով։

Մեր ժողովրդի մեծ մասը հեռու մնացած է եւրոպական լուսաւորութեան ներքութիւններէն։

Գալով զէնքերուն մենք այնչափ ունինք որ մեզի կը բաւէ քանի մը տարի պատերազմելու։ Վերջապէս ժամանակ է սկսիլ յուսալ թէ Անգլիան է որ առաջինը պիտի թուլնայ։

Վերջապէս, խնդալով կաւելցնէ Թրանսվալի ներկայացուցիչը, անգլիացիները, պատերազմի սկսելէն ի վեր, մեր ամենալաւ մատակարարները են։ Ամէն մի ճակատամարտը մեզի մեծ պաշար կուտայ։

— Անգլիացիները գերած են Գերմանական վաճառականական նաւ մը Պիւնտէսբատ և տարած Տիւրպան։ Գերմանական թերթերը ահագին աղմուկ բարձրացուցին, իբր թէ Անգլիա իրաւունք չունէր այդ վաճառականական նաւը ձերբակալելու։ Դեկտեմբեր 21ին Տիւրպանէն կը հեռագրեն, որ այդ նաւու վրայ կը գտնուի եղեր, 7000 թամբ, 5 խոշոր թնդանօթ, 50 թնօ բրաժէկթիլ և 170 վարժ թնդանօթաձիգեր, որոնք Թրանսվալ կերթան եղեր։

Գոլէզպերգի քով, անգլիական ժէներալ Ֆրէնչ ճակատամարտ ունեցեր է Պոէրներու հետ քանի մը տնգամ, և անոնք ետ մղեր է, այնպէս որ Պոէրները ստիպուեր են թողուլ և ետ քաշուիլ։ Այս առաջին յաջողութիւնը Անգլիոյ մէջ մեծ ոգեւորութիւն պատճառած է։

Ֆրէնչ հեռագրած է թէ եթէ օգնական զօրք ստանայ, պիտի կրնայ թշնամին բոլորովին տեղէն հանել։ Դեկտեմբեր 27ին արդէն այդ օգնութիւնը ստացեր է, կըսպասուի որ շուտով Գոլէզպերկը գրաւէ։

— Զարը իշխան Ֆէրտինանտին յայտարարած է թէ՝ ինք և ձարուհին մտադիր են Պուլկարիա գալ Սոֆիոյ մէջ Ալէքսանտր երկրորդի համար արձան կանգնեցնելու միջոցին։

— Տէյլի-Քրոնիքլի Մոսկուայի թղթակիցը կը հաղորդէ թէ Ա. զանիսատանի սահմանագլուխը պիտի ղրկուի 70,000 զինուոր, և մեծ քանակութեամբ պաշարողական խոշոր թնդանօթներ։

— Դեկտ. 21ին Պոլսէն կը հեռագրեն թէ՝ Եըլտըզի մէջ գեղյոյս ունին որ Մահմուտ փաշան կը վերադառնայ. անոր առաջարկուած է Եփրատ և Տիգրիս գետերու՝ ճահիճները չորցնելու շահաւոր գործը, նախարարական պաշտօն, 5000 ոսկի ճամբու ծախք և իր ու ընկերներու պատիժէն բոլորովին ազատ մնալը։

— Պոլսէն կը գրեն թէ այն մէկ քանի թիւրքերը որոնք Պոլսոյ Անգլիական դեսպան Սըր Նիքոլա Օ'Քոնորի դիմած էին Թրանսվալի պատերազմին առթիւ իրենց համակրութիւնը յայտնելու թագուհիին կառավարութեան և ժողովուրդին և որոնք՝ 8 օրուան փնտռտուքէ մը յետոյ ձերբակալուած՝ ու բանտարկուած էին, Վանցեալ՝ շաբթու արձակուեր են, 10 օր բանտին մէջ չարաչար տանջուելէ յետոյ։

Այս արձակումին պատճառը Անգլիոյ դեսպանին անմիջական միջամտութիւնը եղած է. այս միջամտութիւնը թէեւ իւրաքանչիւր հանդամանք մը չէր առած, սակայն երբ բանտարկեալներէն մին՝ տրուած՝ չարչարանքներուն չդիմանալով բանտին մէջ կը խենդենայ, այն ատեն պահանջի և սպառնալիքի խնդիր մէջտեղ կելնէ, որուն վրայ կորոշեն անմիջապէս մնացած երեք հոգին արձակել և՝ խենդեցածն ալ հիւանդանոց փոխադրել։

Որքան որ այսօր այդ մարդէկ Պոլսոյ մէջ աղատ կը դեգերին, սակայն՝ երբէք վստահութիւն և եւ՝ աշխատութիւն չի կայ իրենց անձին ապահովութեան մասին։ Վասն զի այսօր կամ վաղը անոնք կրկին ձերբակալուելով վայրկենապէս շոգենաւ պիտի՝ նետուին՝ աքսորավայրերը ծաղկեցնելու համար և Անգլիոյ դեսպանը այն ատեն կատարուած եղելութեան մը հանդէպ գտնուելով միմիայն պիտի կրնայ ակռաները կճրտացընել։

Ա Զ Դ

—

Անցեալ շաբաթ օրուան համարը չը կրցանք հրատարակել, տառերու փոփոխութեան և Պուլկարական Մնունդի պատճառաւ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»Ի

——

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրոշիւռներ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ
ԿՕՇԿԱԿԱՐ

Մուսաշլահ հրապարակին վրայ Կոսպօքին Համի Բէյլ.ֆի մեծ շենքին տակ

Ճաշակաւոր, տոկուն եւ ձեւաւոր կօշիկ չինել տալ ուզողը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խորասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ։

Գիները խիստ դիւրամատչելի։

Печатница „Взаимность“ Варна.